**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌԻԻ ՄԱՐԶ**
**ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

ՀՀ Լոռու մարզ գ. Արևաշող 1 Փ. 105, Հեռ. 0255-2-21-76

**N ԼՄԱՀ 0136**
***28 հունիս 2019թ.***

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33 - րդ հոդվածի 4 -րդ կետի 9) - րդ ենթակետով կից Ձեզ եմ ներակայացնում Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի 2019 թվականի թիվ 28, 29 որոշումները:

Առդիր՝ 2 էլ. նյութ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Սեվադա Սահակյան*
*0255-2-21-76*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արեվաշող համայնք,
հասցե գ._Արեվաշող 1 Փ. 105,
Հեռախոս 0255 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» Հունիսի 2019թ. N° 28

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38 րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով, Արևաշող համայնքի ավագանու 2017թ. Մայիսի 29 – ի «ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմամբ, և հիմք ընդունելով Արևաշող համայնքի բնակիչների դիմումները ինչպես նաև համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի 2019թ. հունիսի 17 ի թիվ 6 եզրակացությունը `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Արևաշող համայնքի բյուջեի 4726 «Հուղարկավորության նպաստներ բյուջեից» հոդվածից Արևաշող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հարազատի հուղարկավորության ծախսերը հոգալու նպատակով հատկացնել դրամական օգնություն յուրաքանչյուրին 25000 (քսանհինգ հազար) ական ՀՀ դրամ՝

1) Անահիտ Վարազդատի Այվազյանին՝ սկեսրոջ հուղարկավորության ծախսերի համար
2) Ռուբեն Գագիկի Ավդալյանին՝ հոր հուղարկավորության ծախսերի համար
3) Քրիստինե Աշոտի Պետրոսյանին՝ սկեսրոջ հուղարկավորության ծախսերի համար
4) Կարինե Սերյոժայի Մարտիրոսյանին՝ մոր հուղարկավորության ծախսերի համար

2. Համայնքապետարանի առաջատար մասնագետ հաշվապահին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ. ՊԱՊԻԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 Հունիսի 2019թ. թիվ 29

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 06-021-0031-0013 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ ԱԶԱՏԻ ՄԱԳՈՅԱՆԻ ԵՎ ԱՄԱԼՅԱ ԷՆՎԵԼԻ ԽՈՅԵՑՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում 06.021-0031-0013 ծածկագրի տակ գտնվող 0,157 հա մակերեսով հողամասը հանդիսացել է Ռաֆայել Ազատի Մագոյանի և Ամալյա Էնվելի Խոյեցյանի ընդհանուր համատեղ սեփականությունը, որին վերջիններս տիրապետել, տնօրինել և օգտագործել են մինչև սեփականաշնորհումը: Նշված հողամասի վրա վերջիններիս կողմից 1990թ. – ին կառուցվել է 272,05 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տուն և 78,65 քմ մակերեսով անասնաշենք, որոնք Ռաֆայել Ազատի Մագոյանը և Ամալյա Էնվելի Խոյեցյանը ժառանգել են: 2008թ. – ին վերջիններիս համաձայնությամբ Ռաֆայել Ազատի Մագոյանի և Ամալյա Էնվելի Խոյեցյանի կողմից վերը նշված բնակելի տանը կից ինքնակամ կառուցվել են 22,1 քմ խոհանոց, 27,01 քմ ավտոտնակ և 7,09 քմ պարիսպ:*

*Նկատի ունենալով, որ վերը հիշատակված ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանված շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ սահմանելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքի 60 – րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ուստի ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի պահանջներով, ՀՀ Կառավարության 2006թ. – ի մայիսի 18 – ի 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» օրենքի 23 – րդ հոդվածի 6 – րդ կետով և 37 – րդ հոդվածով հիմք ընդունելով «Սարգիս Թամազյան» ԱՁ -- ի կողմից կազմված հատակագիծը, 06.05.2019թ. – ի անշարժ գույքի ժառանգության իրավունքի վկայագիրը:*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. *Ճանաչել օրինական Ռաֆայել Ազատի Մագոյանի (ծնված 1960թ.),և Ամալյա Էնվելի Խոյեցյանի (ծնված 1963թ.) կողմից ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում 06-021-0031-0013 ծածկագրի տակ գտնվող սեփականության իրավունքով իրենց պատկանող 0,157 հա հողամասի վրա 2008թ – ին ինքնակամ կառուցված 22,1 քմ ընդհանուր մակերեսով խոհանոցը, 27,01 քմ ընդհանուր մակերեսով ավտոտնակը և 7,09քմ ընդհանուր մակերեսով պարիսպը:*
2. *Օրենքի ուժով ճանաչել Ռաֆայել Ազատի Մագոյանի (ծնված 1960թ.),և Ամալյա Էնվելի Խոյեցյանի (ծնված 1963թ.) սեփականության իրավունքը իրենց պատկանող 0,157 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա 2008թ – ին կառուցված 22,1 քմ ընդհանուր մակերեսով խոհանոցի, 27,01 քմ ընդհանուր մակերեսով ավտոտնակի և 7,09քմ ընդհանուր մակերեսով պարիսպների նկատմամբ:*
3. *Հանձնարարել հաշվապահին իրականացնելու ինքնակամ կառույցների համար օրենքով սահմանված վճարների գանձման աշխատանքները՝ գանձելով 18546 (տասնութ հազար հինգ հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ:*
4. *Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 – օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:*
5. *Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտավորությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:*
6. Ուժը կորցրած ճանաչել Արևաշող համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 30 - ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևխաշող համայնքում 06-021-0031-0013 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասի վրա կառուցված ինքնակամ բնակելի տան եվ օժանդակ շինությունները օրինականացնելու եվ ռաֆայել ազատի մագոյանի եվ ամալյա էնվելի խոյեցյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» *թիվ 26 որոշումը:*
7. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ